

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արդարադատության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչությունը (այսուհետև՝ վարչություն) նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումն է:

2. Վարչության կանոնադրությունը հաստատում է Արդարադատության նախարարը (այսուհետ՝ նախարար):

3. Վարչությունը գործում է Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի, նախարարության և սույն կանոնադրությունների հիման վրա:

4. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են վարչության պետը, վարչության պետի տեղակալը և վարչության բաժինները:

#### 2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Վարչության նպատակներն են՝

1) Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության շահերի պաշտպանությունը.

2) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացված վճիռներով սահմանված պահանջների կատարումը:

6. Վարչության խնդիրներն են՝

1) Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազոր ներկայացուցչի գործառույթների իրականացմանն աջակցելը.

2) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացված վճիռների և որոշումների կատարման գործընթացին օժանդակելը.

3) Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում մարդու իրավունքների միջազգային և եվրոպական չափանիշների ներդրմանն աջակցելը:

#### 3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր նպատակներին և խնդիրներին հասնելու համար իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության շահերը ներկայացնելուն աջակցելը.

2) Մարդու իրավունքների եվրոպական դատարան գանգատ ներկայացրած անձանց կամ նրանց ներկայացուցիչների հետ խնդրի բարեկամական կարգավորման նպատակով հաշտության համաձայնություն ձեռք բերելուն ուղղված բանակցություններին, ինչպես նաև իրավասու մարմինների հետ խորհրդակցություններին մասնակցելը.

3) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Հայաստանի Հանրապետությանը պարտավորեցնող վճիռների և որոշումների կատարման գործընթացը համակարգելը, այդ թվում՝ դիմումատուներին արդարացի փոխհատուցման գումարի վճարման գործընթացը կազմակերպելը, վճիռների թարգմանությունը և հրապարակումը կազմակերպելը, ինչպես նաև նշված վճիռների և որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե ներկայացման ենթակա գործողությունների ծրագրերի կամ գործողությունների զեկույցի նախագիծեր մշակելը.

4) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և որոշումների հիման վրա Հայաստանի Հանրապետության օրենքներում և այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու կամ նոր օրենքներ կամ այլ իրավական ակտեր ընդունելու, ինչպես նաև օրենքների կամ այլ իրավական ակտերի կիրառման կամ պետական մարմինների գործունեության պրակտիկան բարելավելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտերի նախագծեր մշակելը կամ դրանց մշակմանը մասնակցելը՝ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում մարդու իրավունքների միջազգային և եվրոպական չափանիշների ներդրումն ապահովելու նպատակով.

6) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ վճիռների և որոշումների վիճակագրությունը վարելը, ինչպես նաև վարչության խնդիրների լուծման համար անհրաժեշտ վերլուծություններ իրականացնելը:

#### 4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

##### 8. Վարչության իրավասություններն են՝

1) իր գործառույթների շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանից ստացված գործերով գանգատների վերաբերյալ կառավարության դիրքորոշման նախագծեր մշակելը, վիճակագրություն վարելը, վերլուծություն իրականացնելը, կատարված վերլուծության հիման վրա օրենսդրության ոլորտում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը, նախագծեր կազմելը.

2) Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչին աջակցելը.

3) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացված վճիռների կատարման վերաբերյալ գործողությունների ծրագրերի և զեկույցների նախագծեր մշակելը, իրավասու մարմինների կողմից վճիռներով սահմանված պահանջների կատարման ընթացքին հետևելը, դրանից բխող առաջարկություններ ներկայացնելը:

## 5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԲԱԺԻՆՆԵՐԸ

9. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են՝

- 1) քրեական և վարչական գործերով բաժինը.
- 2) քաղաքացիական և տնտեսական գործերով բաժինը.
- 3) վճիռների կատարման և կոնվենցիոն պահանջների ապահովման բաժինը:

10. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

## 6. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

11. Քրեական և վարչական գործերով բաժնի գործառույթներն են՝

1) Մարդու իրավունքների եվրոպական դատարանից ստացված քրեական և վարչական գործերով գանգատների վերաբերյալ կառավարության դիրքորոշման նախագծեր մշակելը.

2) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ քրեական և վարչական գործերով վճիռների ու որոշումների վիճակագրություն վարելը, ինչպես նաև անհրաժեշտ վերլուծություններ իրականացնելը.

3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված վերլուծությունների հիման վրա կամ ըստ անհրաժեշտության՝ քրեական և վարչական օրենսդրության ոլորտներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը.

4) իրավասու պետական մարմիններից քրեական և վարչական գործերի վերաբերյալ նյութեր ստանալու նպատակով հարցումների նախագծերը պատրաստելը.

5) նախքան Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից վճիռ կայացումը՝ բարեկամական կարգավորման ձևով խնդրի լուծման նպատակով կողմի հետ բանակցություններին մասնակցելը.

6) ընթացիկ աշխատանքն իրականացնելիս տեղեկանքներ, գրություններ նախապատրաստելը, ինչպես նաև, առկայության դեպքում, քաղաքացիների՝ բաժնի իրավասությանը վերաբերող դիմումների պատասխանները մշակելը.

7) իր իրավասության սահմաններում մասնագիտացված իրավատեղեկատվական բազաների ստեղծման և վարման աշխատանքներին մասնակցելը.

8) սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ իրականացնելը:

12. Քաղաքացիական և տնտեսական գործերով բաժնի գործառույթներն են՝

1) Մարդու իրավունքների եվրոպական դատարանից ստացված քաղաքացիական և տնտեսական գործերով գանգատների վերաբերյալ կառավարության դիրքորոշման նախագծեր մշակելը.

2) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ քաղաքացիական և տնտեսական գործերով վճիռների ու որոշումների վիճակագրություն վարելը, ինչպես նաև անհրաժեշտ վերլուծություններ իրականացնելը.

3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված վերլուծությունների հիման վրա կամ ըստ անհրաժեշտության՝ քաղաքացիական և տնտեսական օրենսդրության ոլորտներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը.

4) իրավասու պետական մարմիններից քաղաքացիական և տնտեսական գործերի վերաբերյալ նյութեր ստանալու նպատակով հարցումների նախագծերը պատրաստելը.

5) նախքան Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից վճռի կայացումը՝ բարեկամական կարգավորման ձևով խնդրի լուծման նպատակով կողմի հետ բանակցություններին մասնակցելը.

6) ընթացիկ աշխատանքն իրականացնելիս տեղեկանքներ, գրություններ նախապատրաստելը, ինչպես նաև, առկայության դեպքում, քաղաքացիների՝ բաժնի իրավասությանը վերաբերող դիմումների պատասխանները մշակելը.

7) իր իրավասության սահմաններում մասնագիտացված իրավատեղեկատվական բազաների ստեղծման և վարման աշխատանքներին մասնակցելը.

8) սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ իրականացնելը:

13. Վճիռների կատարման և կոնվենցիոն պահանջների ապահովման բաժնի գործառույթներն են՝

1) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Հայաստանի Հանրապետությանը պարտավորեցնող վճիռների և որոշումների պահանջների կատարման գործընթացին օժանդակելը.

2) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացված վճիռների կատարման վերաբերյալ գործողությունների ծրագրերի և հաշվետվությունների նախագծեր մշակելը.

3) Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում մարդու իրավունքների միջազգային և եվրոպական չափանիշների ներդրումն ապահովելը.

4) «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային այլ փաստաթղթերի համակողմանի և պարբերական ուսումնասիրություններ իրականացնելը.

5) սույն կետի 4-րդ ենթակետում նշված ուսումնասիրությունների արդյունքներով Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի կատարելագործման վերաբերյալ առաջարկներ ներկայացնելը.

6) եվրոպայի խորհրդի Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի, ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի, ՄԱԿ-ի Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով ենթակոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ զեկույցների պահանջների կատարմանն ուղղված առաջարկներ ներկայացնելը, ինչպես նաև նույն նպատակով համապատասխան օրենքների և այլ իրավական ակտերի նախագծեր մշակելը.

7) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացված վճիռների և որոշումների, ինչպես նաև դրանց կատարման վիճակագրությունը վարելը.

8) ընթացիկ աշխատանքն իրականացնելիս տեղեկանքներ, գրություններ

նախապատրաստելը, ինչպես նաև, առկայության դեպքում, քաղաքացիների՝ բաժնի իրավասությանը վերաբերող դիմումների պատասխանները մշակելը.

9) իր իրավասության սահմաններում մասնագիտացված իրավատեղեկատվական բազաների ստեղծման և վարման աշխատանքներին մասնակցելը.

10) սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ իրականացնելը:

## 7. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

14. Նախարարը ղեկավարում է նախարարության գործունեությունը:

15. Վարչության գործունեությունը համակարգում է նախարարի համապատասխան տեղակալը՝ իր համակարգման լիազորությունների շրջանակներում:

16. Վարչությունը գործում է վարչության պետի անմիջական ղեկավարությամբ:

17. Վարչության պետն անմիջական հաշվետու է նախարարին և նախարարի համապատասխան տեղակալին:

18. Վարչության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերն ստորագրում է նախարարը կամ նախարարի համապատասխան տեղակալը:

19. Վարչության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերը վարչության պետը կարող է ստորագրել անմիջական ղեկավարի հանձնարարությամբ կամ համաձայնությամբ: